Արցախի Հարցը ՄԱԿի Մարդկային Իրաւունքների Յանձնաժողովում

1991թ. Փետրուար-Մարտ ամիսներին ՄԱԿի Մարդու Իրաւունքների Յանձնաժողովում ի թիւս այլ հարցերի քննարկուեց նաեւ Արցախի հարցը, որը բարձրացուած էր Մարդու Իրաւունքների Պաշտպան փաստաբանների կազմակերպութեան անունից, Հրայր Պալեանի կողմից: Շեշտուեց, որ տակաւին չի ճանաչուած Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, ոտնահարուած են մարդկային իրաւունքներն ու ազատութիւնները: Զուգահեռներ անցկացուեցին արցախեան եւ բալթեան դէպքերի միջեւ:

Քննարկուող հարցերի շրջանակում մասնակիցների ուշադրութեանը ներկայացուեց նաեւ Թուրքիայում մարդու իրաւունքների շարունակական ոտնահարման փաստը:

Յանձնաժողովի անդամներին բաժանուեց «Լեռնային Ղարաբաղը եւ ազգային հակամարտութիւնները. մարդու իրաւունքների ոտնահարում» փաստաթուղթը եւ գրաւոր մի միջամտութիւն՝ Արցախում Յունուար ամսուայ սկզբին կատարուած ազգամիջեան բախումների ամփոփագիրը, որը թարգմանուած տարբեր լեզուների զետեղուելու է ՄԱԿի պաշտօնական արձանագրութիւնների շարքում:

Փորձ արուեց ստիպել միջազգային հանրութեանը գիտակցել Արցախի իրադրութեան եւ ընդհանրապէս ԽՍՀՄում ազգամիջեան հակամարտութիւնների լրջութիւնը, Բալթեան հանրապետութիւններում կատարուած դէպքերի եւ մարդու իրաւունքների վերջին արգելքների օրինակով ներկայացնել դրանց բացասական ազդեցութիւնը՝ Խորհրդային Միութեան ժողովրդավարականացման գործընթացի վրայ:

Ստիպել միջազգային հանրութեանը աջակցել այնպիսի օրէնքների ստեղծմանը, որոնք խաղաղ լուծում կը տան Արցախի հարցին, ազգամիջեան միւս հակամարտութիւններին՝ նախքան նրանք կը վերածեն զինուած ընդհարումների եւ կը հանգեցնեն մարդկային իրաւունքների կտրուկ սահմանափակման:

Համոզել ՄԱԿին, որ ստեղծուած իրավիճակում այդ կազմակերպութիւնը կարող է եւ պէտք է խաղայ աւելի շատ կանխարգիլողի, քան դատապարտողի դեր:

Ջանալ, որ Բալթեան դէպքերը շտարանջատուեն ԽՍՀՄում ազգամիջեան միւս հակամարտութիւններից:

Քննարկուող հարցերից առաւել վիճահարոյցը վերջին հարցն էր: Նախապէս արտգործ նախարարների մակարդակով կայացած բանակցութիւններից յետոյ, Շուեդիան այս հարցի առիթով ներկայացրել էր մի բանաձեւ, ուր դէպքերը գնահատւում է ին Խորհրդային Միութեան ազգային այլ հարցերից անկախ: Հակառակ տեսակէտը մերժուեց, եւ Խորհրդային Միութեան պնդմանն ընդառաջելով, բանաձեւը ներկայացուեց պարզապէս իբրեւ յայտարարութիւն:

Յանձնաժողովի մասնակիցներն աննախադէպ համերաշխութիւն ցուցաբերեցին Պարսից Ծոցի դէպքերի քննարկման ու գնահատման ժամանակ:

Արցախեան հարցի կապակցութեամբ հանդիպումներ ու քննարկումներ կայացան ԽՍՀՄ Արտախին Գործերի նախարարութեան մարդու իրաւունքների բաժնի վարիչ Թեհմուրազ Ռամիշուիլու, Յունաստանի ներկայացուցիչ Դիմիտրիու Իլիոպուլոսի, Յանձնաժողովում Ուկրաինայի պատուիրակութեան նախագահ, Կիեւի համալսարանի միջազգային իրաւունքի դասախօս Վլ. Վասիլենկոյի եւ այլոց հետ:

Կատարուած աշխատանքը կարեւորուեց Արցախեան հարցը միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում պահելու, Հայաստանի եւ այլ երկրների միջեւ կապեր հաստատելու ու ամրապնդելու առումով: